91. ԷՐԿՈՒ ԳՈԴ ՑՈՐԵՆ

Իլա̈լ ա, չիլա̈լ, մին մարթ, մին էլ մին կնեգյ։ Էտ մարթը շատ վխելիս ա իլա̈լ ո̄ւրա̈ն կընդանան։ Ամուն օր մարթին թըկըմհակավ ղըկելիս ա իլա̈լ ծմակ, փա̈ղա̈-մա̈ղա̈ պիրիլ տալիս, ծխելիս, մին քանե կպեկա, պենա դո̄ւղո̄ւցնելիս, յոլա քյնա̈լիս։

Մին օր կնեգյը մին տասը հաց ա թխում, հինչ հա՜ց, ջանըմ, խուխու պլիթնե՜, ըն էլ կյա̈րի քյո̄ւթեր։

Ո̄ւրո̄ւգյո̄ւմը չելանը քոն ինիլը մին ճոթ տնո̄ւմ ա մարթին ըռըշկին, ինքյը պըրանում, համ էլ ասում.— Ա՛ մարթ, էքյուծ քշըհանա, չելա̈նը լո̄ւսա̈նալը, եր ըս կենում քյինում ծմակը, էլ գյո̄ւղո̄ւմ չը՜մ, հոմց քյինում ը՜ս, վեր յըես հեն ինիմ քոն իլա̈ծ։

Խըեղճ մարթը վըխվխելավ, լո̄ւղին կըտըրած լհա̈ մին խոսկ ա ասըմ.— Լը, լը, լը… ա̈՜… ա̈՜… վ… վ, ա՛յ… կը…ն…ե՜գյ։

Կընեգյը ասում ա, պըրծնում, հիլըհա̈լ լամբը հընգյըցնում, քոն ընո̄ւմ։ Մարթը քըռըքոռի տալավ, մին թա̈հրա̈վ տեղերը քցում ա, մըրափում։ Քըշըհանա մըթըն-մըթեն եր ա կենըմ, թա̈ քյինա̈, մհենգյ էլ տըեսնըմ ա, վեր հացը խըեգյ ա, մտածում ա, թա̈ հո՞մց անե, վեր մին հաց կյուղանա, կընդանան թաքո̄ւմ։

Հացը տիրած ա ինո̄ւմ շկափեն յրա։ Կուճուր-կուճուր քյընո̄ւմ ա, թա̈ յոր օնե, բո̄ւրդա̈ն մին աման ա վեր քցում, կոտրում։

Շըրխկոցեն յրան կնեգյը եր ա կենըմ, սկսում ճըղճղալը,— Ա՛ թաղված, կյեղված, էտ հի՞նչ ըս անըմ, հը՞, մհե հո՞մց ըս, վեր եր կենամ ջանըտ ախցան անի՜մ։

Մարթը տուղտուղալավ ասում ա.— Ա՛ կընեգյ, ջանետ մա տա՞ղ, վեշ մին պեն չըմ անըմ, քյինում ըմ ծմակը, ցկատեն ըմ շոռ կյա՞մ։

Կնեգյն ասում ա.— Ա՛ փչանաս տու, ըստեղ ցակատը հի՞նչ ա անըմ։

— Ա՛ կնեգյ, պա յըես քը մատաղ, պա յըես տիրալ ըմ ըստեղ, հվատըմ չը՞ս, հասե եր կալի։

Էտ վախտը բուրդաշ շիրեփը ճանգյըն ա ընգնում, գյուղում ա, թա ցակատըն ա։ Մթկումը ասում ա. «Ա՛յ աստուծ, էս հինչ աճողութունն ար, վեր ցակատը ստեղ արա։ Հալա գյիգում չի, թա ծեռքենը շիրեփըն ա։ Մարթը մին թահրավ տունս ա կյամ, մըթեն-մըթեն հղե ինում բիդի ծմակը։

Քյինալիս կընգանը յրա կըղնված ինքյը-ինքյը խուսելավ, ասըմ ա. «Ա՛րա, պա խստի էլ օյին կինի՞, վեր յըես ընգալ ըմ էսէս քյուփուրեն ճանգյը՞։ Ասում ա՝ էտ հի՞նչ ըս անըմ։ Ատտա շան ախչիգյ, տըեսնըմ չը՞ս հինչ ըմ անը՞մ, լափ խստի ծըեռքըս մըեկ-նըմ ըմ, չորս հաց յոր օնիմ, տանիմ, հանդին օտիմ»։

Ինքյը-ինքյը խուսելավ քյինալիս մին ծառ ա պտահում, շիրե-փավը թխում ա, թա կըտրե, բուրդաշ շիրեփը կոտրում ա։ Ինքյըն էլ գյուղում ա, թա ցըկատեն շուղուփն ա տունս եկալ։

Ըսկըսում ա ծեռքերը տափը քըսելը, թա քիթենա։ Տեսնըմ ա վեր քըթենում չի, ուստուծեն ղաչանք ա անըմ.

— Աստուծ-աստուծ ցըկատես շըղուփը քըթիր, քյըեզ էրկու գոդ ցորեն կտամ։

Ասում ա պըրծընում, էլհա ծեռքերավ տըփտըփըմ։ Բուրդաշ շիրեփեն կյուշը ծեռքն ա ընգնում։

Մարթը կըղնված ասում ա.— Ա՛ ժողովուրթ, մին տեսեքյ էս աստուծը հիշքան ա չար, հալա ցըկատես շուղուփը քըթընալու, դոդը ղարկալ ա, թա. «էրկու գոդ ցորեն ղարկեմ»։ Թո՛ւռ՞, նահլաթը քյըեղ, չար սրտանա՞։